

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ի 2019 թվականի N _____-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի **«Երևանի Գ. Էմինի անվան N 182 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Երևանի Գ. Էմինի անվան N 182 ավագ դպրոց» հիմնադրամի վերակազմավորելու մասին»** N 1010-Ա որոշման 3-րդ կետում և որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ, 56-րդ կետերում և 56-րդ կետի 1-ին ենթակետում **«կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:**
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի **«Վանաձորի բնօրգամարտի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ստեղծելու մասին»** N 266-Ա որոշման 5-րդ կետում **«սպորտի և երիտասարդության հարցերի» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:**
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի **«Երևանի օլիմպիական մանկապատանեկան համալիր մարզադպրոց» պետական ոչ առևտրային**

- կազմակերպությունը ստեղծելու մասին»** N 1331-Ա որոշման 4-րդ կետում «սպորտի և երիտասարդության հարցերի» բաժնի փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բաժնով:
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 31-ի **«Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին»** N 1109-Ա որոշման 4-րդ կետում «կրթության և գիտության» բաժնի փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բաժնով:
 5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 21-ի **«Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 15 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին»** N 698-Ա որոշման 4-րդ կետում «կրթության և գիտության» բաժնի փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բաժնով:
 6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 21-ի **«Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 2 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին»** N 701-Ա որոշման 4-րդ կետում «կրթության և գիտության» բաժնի փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բաժնով:
 7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: